

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ ԱՅԼԵԻԱՅԼՔ

ԼԱՆՁԱԽԱՆՔ ԿՐԵԼՈՒ ԻՐԱԴՈՒՆՔ ՇՆՈՐՀՈՒԵՅԱԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒՔ Տ. ՏԻՐԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ ԵՒ Տ. ՏԻԳՐԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՈՍԿԱՆԵԱՆԻ

Տարույս Օգոստոսին Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան՝ Հայրը գնահատելով Հայֆայի Հայոց հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Տիրայր Քահանայ Յովակիմեանի եւ Գեթսեմանի Սուրբ Աստուածածնի Վերափոխման տաճարի ծիսակատար՝ Արժանապատիւ Տ. Տիգրան Քահանայ Ոսկանեանի 13 տարուայ ծառայութիւնը՝ Լանջախաչ կրելու իրաւունք շնորհեց եւ նուիրեց լանջախաչեր:

ՀՈԳԵԻՈՐ ՊԵՏԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՅՅԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՅԱՏԱԿԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՎԱՅՐ

Չորեքշաբթի, 21 Օգոստոս, 2024-ին, Սուրբ Յարութեան տաճարի իրաւատէր երեք համայնքներու հոգեւոր պետերը հերթական անգամ այցելեցին տաճարէն ներս կատարուող յատակի վերանորոգման աշխատանքներու վայր: Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի եւ ընկերակցութեամբ Հոգեշնորհ Տ. Սամուէլ Ծ. Վարդապետ Աղոյեանի, Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեանի եւ Տ. Արքակ Աբեղայ Սարուխանեանի միւս իրաւատէր յարանուանութեանց պատուիրակներու հետ մօտէն ծանօթացան Սուրբ Յարութեան տաճարի յատակի նորոգութեան աշխատանքներուն:

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏԱՃԱՐ

26 Օգոստոս, 2024-ին, կէս գիշերէն ետք ժամը 2:45-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, Ժառանգաւոր սաները եւ Սաղիմահայ ուխտաւորները կատարեցին իրենց տարեկան ուխտագնացութիւնը դէպի Աստուածամօր Վերափոխման տաճար, ուր Սուրբ Կոյսի Գերեզմանին վրայ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ:

Պատարագեց եւ քարոզեց Հոգեշնորհ Տ. Եղիշէ Վարդապետ Ուչքունեան:

**ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԺՆԵՐԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀՈԳԵԼՈՐ
ՊԵՏԵՐԸ ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻ ՆԵՐԿԱՅ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱԻԱՐՏԵԼՈՒ
ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ
ՎԵՐԵԱՔԵՐԵԱԼ ՀԱՆԴԷՍ ԵԿԱԾ ԵՆ ՅԱՅԱՏՐԱՐՈՒԹԵԱՄԲ**

Երկուշաբթի, 26 Օգոստոս, 2024-ին, Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանին մէջ տեղի ունեցաւ Երուսաղէմի պատրիարքներու եւ եկեղեցիներու հոգեւոր պետերու հանդիպում, որու ընթացքին քննարկուեցաւ Կազայի մէջ տեղի ունեցող պատերազմի, անոր հետեւանքներու եւ Սուրբ Երկրին մէջ ծառացած մարտահրաւէրներու վերաբերեալ հարցեր: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ժողովին ներկայ գլխունուեցաւ Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:


Յայտարարութեան մէջ Երուսաղէմի Պատրիարքները եւ եկեղեցիներու հոգեւոր պետերը մասնաւորապէս ըսած են. «Հակառակ մեր եւ միջազգային հանրութեան կողմէ բռնութեան դադրեցման բազմակի կոչերուն՝ իրավիճակը մեր սիրելի Սուրբ Երկրին մէջ միայն կը շարունակէ վատթարանալ»:

Հաշուի առնելով տագնապալի զարգացումները՝ հոգեւոր պետերը անգամ մը եւս խնդրած են պատերազմող կողմերու առաջնորդներուն, անյապաղ աւանջալուր ըլլալ իրենց եւ միջազգային հանրութեան կոչերուն, համաձայնութիւն ձեռք բերել եւ միջազգային հանրութեան հետ համատեղ սկսիլ դիւանագիտական քննարկումներ, անդրադառնալ երկու ժողովուրդներու միջեւ առկայ երկարամեայ դժգոհութիւններուն եւ ձեռնարկել կոնկրետ քայլեր, որոնք կը նպաստեն տարածաշրջանի արդար եւ տեւական խաղաղութեան վերահաստատման:

Հոգեւոր պետերն իրենց յատուկ մտահոգութիւնը յայտնած են նաեւ տարածաշրջանի իրենց հովուական պատասխանատւութեան ներքեւ գտնուող քրիստոնէական համայնքներու համար:

Յայտարարութեան վերաջաւորութեան, հոգեւոր պետերը դիմած են քրիստոնեայ հաւատացեալներուն եւ բոլոր անոնց, որոնք բարի կամք ունին ամբողջ աշխարհի մէջ, որպէսզի աղօթեն եւ խթանեն կեանքի տեսլականը, որպէսզի վերահաստատուի խաղաղութիւնը պատերազմէն աւերուած մեր տարածաշրջանի մէջ՝ յիշեցնելով Քրիստոսի խօսքերը. «Երանի՜ խաղաղարարներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին» (Մատթ. 5:9):

Հոգեւոր պետերու միասնական յայտարարութեան անգլերէնը եւ արաբերէնը տե՛ս էջ 336, 337:



PATRIARCHS AND HEADS OF THE CHURCHES IN JERUSALEM

STATEMENT ON THE URGENT NEED TO CONCLUDE THE PRESENT WAR AND TURN FROM THE PURSUIT OF DEATH AND DESTRUCTION TOWARDS THE PROMOTION OF LIFE AND PEACE

26 August, 2024

“Blessed are the peacemakers, for they will be called children of God.”
Matthew 5:9

As we rapidly approach the twelfth month of the present devastating war, We, the Patriarchs and Heads of the Churches in Jerusalem, feel compelled to once again express our grave concerns over its dire direction. For despite repeated calls for the de-escalation of violence from ourselves and the international community, the situation in our beloved Holy Land has only continued to deteriorate.

Millions of refugees remain displaced, their homes inaccessible, destroyed, or beyond repair. Hundreds of innocents are weekly killed or severely wounded by indiscriminate attacks. Countless others continue to endure hunger, thirst, and infectious disease. Among these are those languishing in captivity on all sides, who additionally face the risk of ill-treatment from their captors. Still others, far from the battlefields, have suffered unchecked attacks against their villages, pastures, and farmlands.

Throughout this all, ceasefire negotiations have dragged on interminably, with the leaders of the warring parties seemingly more concerned with political considerations than bringing an end to the pursuit of death and destruction. These repeated delays, coupled with other provocative acts, have only served to heighten tensions to the point where we stand at the precipice of a full-blown regional war.

In view of these alarming developments, We, the Patriarchs and Heads of the Churches in Jerusalem, once again implore the leaders of the warring parties to heed our calls and those of the international community (UNSC Resolution 2735) to reach a rapid agreement for a ceasefire resulting in the end of the war, the release of all captives, the return of the displaced, the treatment of the sick and wounded, the relief of those who hunger and thirst, and the rebuilding of all public and private civilian structures that have been destroyed.

Just as importantly, we call upon the leaders of these peoples, in concert with the international community, to take up without delay diplomatic discussions addressing longstanding grievances between them, leading to concrete steps that promote a just and lasting peace in our region through the adoption of an internationally legitimate two-state solution.

While issuing these calls in the best interests of all who inhabit the region, we express our special concern for those Christian communities under our pastoral charge. These include those taking refuge in Gaza at St. Porphyrios Orthodox Church and Holy Family Catholic Church, as well as the courageous staff of al-Ahli Anglican Hospital and the patients under their care. We pledge to them our continued prayers and support both now and at the conclusion of the war, when we will labor together to rebuild and strengthen the Christian presence in Gaza, as well as throughout the Holy Land.

Finally, we appeal to Christians and all those of goodwill around the world to promote a vision of life and peace throughout our war-torn region, recalling Christ’s words, quoted above: “Blessed are the peacemakers, for they will be called children of God” (Matthew 5:9). During this time of extreme crisis, let us all recommit ourselves towards working and praying together in the hope that, by the grace of the Almighty, we might begin to realize this sacred vision of peace among all God’s children.

—The Patriarchs and Heads of the Churches in Jerusalem



بطاركة ورؤساء الكنائس في القدس

بيان صادر عن بطاركة ورؤساء الكنائس في القدس حول الحاجة الملحة لإنهاء الحرب الحالية والانتقال من السعي وراء الموت والدمار إلى تعزيز الحياة والسلام

26 آب 2024

"طوبى لصانعي السلام، لأنهم أبناء الله يُدعون"
متى 5:9

مع اقتراب الشهر الثاني عشر للحرب المدمرة في غزة، نُعبر نحن، بطاركة ورؤساء الكنائس في القدس، مرة أخرى، مُضطربين، عن قلقنا البالغ إزاء الاتجاه الخطير الذي تسير فيه الأحداث. فبالرغم من الدعوات المتكررة من جانبنا والمجتمع الدولي لخفض مستوى العنف، فإن الوضع في أرضنا المقدسة ما زال يعاني من تدهور مستمر.

لا يزال ملايين اللاجئين مشردين، غير قادرين على الوصول إلى منازلهم التي دُمّرت أو أصبحت غير صالحة للسكن. ويتم قتل أو إلحاق الإصابات بمئات الأبرياء أسبوعياً بسبب القصف العشوائي. وما زال عدد لا يحصى من الأشخاص يعانون من الجوع والعطش والأمراض المعدية. ومن بينهم كافة من يعيشون في الأسر وهم يواجهون خطر سوء المعاملة. وهناك آخرون، تعرضت قراهم ومراعيهم وحقولهم لهجمات غير مبررة.

وفي خضم كل هذا، استمرت مفاوضات وقف إطلاق النار بلا نهاية، حيث يبدو أن هناك قادة أكثر اهتماماً بالمكاسب السياسية من إنهاء السعي وراء الموت والدمار. هذه التأخيرات المتكررة، بالإضافة إلى أعمال استفزازية أخرى، لم تؤدِ إلا إلى تصعيد التوترات لدرجة أننا نقف الآن على حافة حرب إقليمية شاملة.

وفي ظل هذه التطورات المقلقة، نناشد نحن، بطاركة ورؤساء الكنائس في القدس، قادة الأطراف جميعاً مجدداً أن يستجيبوا لدعواتنا ودعوات المجتمع الدولي (قرار مجلس الأمن الدولي رقم 2735) للتوصل إلى اتفاق سريع لوقف إطلاق النار الذي يؤدي إلى إنهاء الحرب، وإطلاق سراح جميع الأسرى، وعودة النازحين، ومعالجة المرضى والجرحى، وتخفيف معاناة الجوع والعطش، وإعادة بناء جميع المنشآت المدنية العامة والخاصة التي دُمّرت.

وبنفس القدر من الأهمية، ندعو قادة الشعوب، بالتعاون مع المجتمع الدولي، إلى الشروع دون تأخير في مفاوضات دبلوماسية تعالج المظالم طويلة الأمد، بحيث تؤدي إلى خطوات ملموسة للوصول إلى سلام عادل ودائم في منطقتنا من خلال تبني حل الدولتين وفق الشرعية الدولية.

وفي حين نطلق هذه الدعوات للصالح العام، فإننا نعبر عن قلقنا الخاص على رعايانا، بما في ذلك من لجأوا إلى كنيسة القديس برفيريوس الأرثوذكسية وكنيسة العائلة المقدسة الكاثوليكية في غزة، وكذلك طاقم العمل الشجاع في مستشفى الأهلي الانجيلي والمرضى تحت رعايتهم. ونعهد لهم بصلواتنا ودعمنا المستمر، سواء الآن أو بعد انتهاء الحرب، حيث سنعمل معاً على إعادة بناء وتعزيز الوجود المسيحي الأصيل في غزة وفي جميع أنحاء الأرض المقدسة.

+++ بطاركة ورؤساء الكنائس في القدس.

ՎԵՐԱՄՈՒՏ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ

Չորեքշաբթի, 4 Սեպտեմբեր, 2024-ին, առաւօտեան ժամը 8:30-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի գլխաւորութեամբ ներկայ գտնուեցաւ Սրբոց Թարգմանչաց վարժարանի դպրոցական նոր տարեշրջանի վերամուտի հանգիստութեան: Այս տարի Սրբոց Թարգմանչաց վարժարանն ունեցաւ 166 աշակերտ-աշակերտուհիներ:

Միաբանութեան ժամանումէն յետոյ վարժարանի սաները երգեցին Հայաստանի Հանրապետութեան օրհներգը եւ Սրբոց Թարգմանչաց վարժարանի հիմնը՝ «Որք զարդարեցին» շարականը, ապա վարժարանի տեսուչ՝ Արժանապատիւ Տ. Արտէն Քահանայ Աբրահամեան կատարեց իր բարիգալուստի խօսքը: Ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը ողջունեց ներկաները եւ քաջալերեց աշակերտները, որպէսզի ուսումնական տարին նոր եռանդով սկսին եւ ջամբուած գիտելիքները յօժարութեամբ իւրացնեն:

Սրբազան Հօր խօսքէն ետք, վարժարանի տեսուչ Տէր Հայրը «Սուրբ Խաչիւս» ըսաւ, իսկ Սրբազան Հայրը «Պահպանիչ»-ով օրհնեց աշակերտները եւ ուսուցիչները, ապա «Հայր մեր»-ով փակեց վերամուտի հանգիստութիւնը:

Հանգիստութենէն ետք հանգիստապետ Սրբազան Հայրը եւ հոգեւոր հայրերը պատուեցան տեսչարանին մէջ:

ՎԵՐԱՄՈՒՏ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ

Հինգշաբթի, 5 Սեպտեմբեր, 2024-ին, առաւօտեան ժամը 9-ին, կատարուեցաւ Պատրիարքութեան ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի 182-րդ ուսումնական տարեշրջանի վերամուտը:

Վերամուտի արարողութեան ներկայ էին Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ ուսուցչական կազմը, գլխաւորութեամբ՝ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի:

Միաբանութիւնը դիմաւորուեցաւ վարժարանի քայլերգի՝ «Սիրտ ի սիրտ»-ի երգեցողութեամբ, ապա, ըստ աւանդութեան, ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Գէորգ Վարդապետ Հայրապետեան Աւետարանէն ընթերցաւ «Սերմնացանի» առակը:

Աւետարանի ընթերցումէն յետոյ, տեսուչ Հայր Սուրբը բարի գալուստի խօսքեր ըսաւ ներկաներուն, պարծանքով անդրադարձաւ ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի մօտ երկդարեայ գործունէութեան, որն իրեն տարեկից չունի ոչ միայն Հայ Եկեղեցւոյ անդաստանէն ներս այլեւ Հայ իրականութեան մէջ: Շեշտեց նաեւ ժառանգաւորացի՝ Սուրբ Աթոռոյս կարեւորագոյն հիմնասիւն եւ շարժիչ ուժ ըլլալու հանգամանքը եւ փառք տուաւ Աստուծոյ Իր աներեւոյթ աջով եւ զօրութեամբ, իւրայատուկ օրհնութեամբ կրթական այս օճախը վառ պահելուն համար:

Իր խօսքին մէջ տեսուչ Հայր Սուրբն անդրադարձաւ նաեւ ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի մասնագիտական ուղղուածութեանն ու հիմնադիրներու սահ-

մանած նպատակին, որ է կրթել ուսանողները նախ հոգեւորապէս, ապա՝ մտաւորապէս: «Եթէ հոգեւոր վարժարանի ուսանող մը չի կրթուիր հոգեպէս, չի կրնար ունենալ բարեպաշտութիւն: Եթէ չունի բարեպաշտութիւն, չի կրնար ունենալ բարեկրթութիւն եւ եթէ մէկը չունի բարեկրթութիւն, որքան ալ մտաւորապէս զարգացած ըլլայ միեւնոյն է անկիրթ կը մնայ: Կրթութիւնը նախ մարդուն հոգիին կը վերաբերի, ապա՝ մտքին: Այդ իսկ պատճառով, այսօր՝ այս վերամուտի հանդիսութեան, ներկայ է թէ՛ հոգեւոր դասը եւ թէ՛ ուսուցչական կազմը, որոնք ներկայացուցիչներն են հոգիի եւ մտքի կրթութեան:

Դեռեւս 5-րդ դարուն Եղիշէ պատմիչ ըսած է. «Ամենայն շարիք մտանեն ի միտս մարդոյ յանուամնութենէ»՝ այսինքն՝ «Բոլոր շար բաները մարդուն միտքը կը մտնեն տգիտութենէն», ընդգծեց տեսուչ Հայր Սուրբն իր խօսքին մէջ՝ մաղթելով Ժառանգաւորացի եւ Ընծայարանի սաներուն, որ յաջողութեամբ լեցուն տարի մը ունենան, Աստուած բացէ անոնց միտքերը իր շնորհներով, որպէսզի առաւել խորն ընկալեն հոգեւոր ճշմարտութիւնները՝ լրացնելու այն տկարութիւնները, որոնք կ'ունենան իրենց ուսումնառութեան ընթացքին: Իսկ ուսուցիչներուն մաղթեց ուժ եւ կորով, որպէսզի շարունակեն իրենց մշակութեան գործը, ինչպէս որ աւետարանի ընթերցումով յորդորուեցաւ, թէ Ժամանակն է սերմեր ցանելու, որպէսզի վաղը հունձքի Ժամանակ ուրախանանք առատ հունձքով: «Թող Աստուած օրհնէ եւ առաջնորդէ Ժառանգաւորաց վարժարանը եւ Ընծայարանը դէպի յարատեւութիւն», եզրափակեց իր խօսքը տեսուչ Հայր Սուրբը եւ հրաւիրեց նախագահ Լուսարարապետ Սրբազան Հայրը՝ կատարելու իր բարի գալուստի եւ օրհնութեան խօսքը:

Հանդիսապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան, նախ փառք տուաւ Աստուծոյ Իր տուած բարիքներուն համար եւ շեշտեց երախտագիտութեան ոգի ունենալու կարեւորութիւնը: «Մարդուն ամենէն տկար կողմը երախտագիտութեան ոգի չունենալն է: Ապերախտ մարդը ո՛չ ուսումի հետ կապ ունի, ո՛չ զարգացումի: Դուք արդէն Աստուծոյ կամքով, թէ շնորհով ձեր ծառայութիւնը կը մատուցէք Աստուծոյ: Ձեզմէ կը պահանջուի, որ ոչ միայն խօսքով, այլեւ ձեր ապրելակերպով օրինակ ըլլաք ձեր շուրջիններուն, որոնք չունին հոգեւոր կրթութիւն: Ձեր խօսուածքը, նստածքը, կատարած իւրաքանչիւր շարժումը ձեր ներքին աշխարհի պատկերը ցոյց կու տայ, եւ մարդիկ անմիջապէս կը հասկնան թէ դուք ինչ հաստատութենէ ելած էք: Սերմնացանի դերը կարեւոր է, բայց առաւել կարեւոր է արտը. ցանողը կը ցանէ, բայց ընդունիլը, բուսցնելը ձեր ընթացքէն կախեալ է, պէտք է պատրաստ ըլլաք թէ՛ հոգիով եւ թէ՛ մըտքով ընդունելու այն՝ ինչ կը ցանուի ձեր մտքին մէջ», ըսաւ Սրբազան Հայրը եւ Ժառանգաւորացի եւ Ընծայարանի ուսանողներուն մաղթեց ուժ, կարողութիւն, հոգեւոր զարգացում եւ հաւատքի զօրացում:

Սրբազան Հօր խօսքէն ետք, վարժարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գէորգ Վարդապետ Հայրապետեան «Սուրբ Խաչիւս» ըսաւ, իսկ Սրբազան Հայրը «Պահպանիչ»-ով օրհնեց ուսանողները եւ ուսուցիչները, որով փակեց վերամուտի հանդիսութիւնը:

Վերամուտի հանդիսութենէն ետք Միաբանութիւնը եւ ուսուցչական կազմը պատուեցան Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի ուսուցչարանին մէջ:

ՆՈՐԸՆԾԱՆԵՐՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ Ի ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ

Նորընծայ հոգեւորականներն իրենց «Քառասունքի» ապաշխարութեան եւ պատարաւութեան շրջանը Սուրբ Հրեշտակապետաց վանքին մէջ անցընելէ, Սուրբ Պատարագի եւ միւս ծէսերու կարգերը ուսանելէ ետք մատուցեցին իրենց Անդրանիկ Պատարագները:

Հոգեշնորհ Տ. Սերովբէ Աբեղայ Անտոնեան Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուց իր Անդրանիկ Պատարագը Հինգշաբթի, 12 Սեպտեմբեր, 2024-ին: Նոյն խորանին վրայ իր Անդրանիկ Պատարագը մատուց նաեւ Հոգեշնորհ Տ. Սիոն Աբեղայ Թաքուշեան՝ Ուրբաթ, 13 Սեպտեմբեր, 2024-ին: Իսկ Արժանապատիւ Տ. Սուրէն Քահանայ Ղազարեան իր Անդրանիկ Պատարագը մատուց Սուրբ Գլխադրի մատրան Սուրբ Սեղանին վրայ՝ 14 Սեպտեմբեր, 2024-ին:

Համաձայն Սուրբ Աթոռոյս սովորութեան, Պատարագի սպասարկութիւնը կատարեց անոնց քառասնօրեայ ուսուցիչ՝ Հոգեշնորհ Տ. Ներսէ՛ Վարդապետ Ալոյեան:

Անդրանիկ Պատարագներու աւարտին Սուրբ Ստեփանոսի մատրան մէջ պատարագիչ նորընծաներն իրենց շուրջառները տարածեցին ներկայ հաւատացեալ ժողովուրդի եւ ժառանգաւոր սաներու վրայ եւ «Փարատեայ» ըսին, ապա նշխար բաժնեցին բոլոր ներկաներուն, որմէ յետոյ ուսուցիչ՝ Տ. Ներսէ՛ Վարդապետ Ալոյեանի ուղեկցութեամբ այցելեցին Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօրը:

Պատարագիչները որպէս իրենց մատուցած Անդրանիկ Պատարագներէն «մաս եւ բաժին», Նորին Ամենապատուութեան նշխար յանձնեցին եւ ստացան անոր օրհնութիւնը:

Քառասնօրեայ առանձնութեան եւ պահեցողութեան շրջանի աւարտին՝ նորընծայ հոգեւորականներու Անդրանիկ Պատարագներէն յետոյ, Կիրակի 15 Սեպտեմբեր, 2024-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ պատարագեց եւ քարոզեց անոնց ուսուցիչ՝ Հոգեշնորհ Տ. Ներսէ՛ Վարդապետ Ալոյեան: Պատարագի սպասարկութիւնը կատարեց Հոգեշնորհ Տ. Սերովբէ Աբեղայ Անտոնեան, իսկ բուրվառակրութիւնը՝ Հոգեշնորհ Տ. Սիոն Աբեղայ Թաքուշեան եւ Արժանապատիւ Տ. Սուրէն Քահանայ Ղազարեան:

Յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագի ուսուցիչ Հայր Սուրբի ուղեկցութեամբ նորընծաները այցելեցին Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանին, ստացան Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը եւ խմբանկարուեցան:

ԱՂԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈԳՉԵԱՆ ԻՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՅԱՆՁՆԵՑ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ

11 Սեպտեմբեր, 2024-ին, Սրբոց Յակոբեանց Միաբաններէն Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի յանձնեց Երուսաղէմի Եբրայական համալսարանի կողմէ վկայուած իր Միջազգային Յարաբերութիւններու Մագիստրոսի կոչման վկայականը:

Նորին Ամենապատուութիւնը, շնորհաւորելով Հոգեշնորհ Հայր Սուրբը գիտական ձեռքբերման համար՝ ականակուռ լանջախաչ մը նուիրեց անոր:

**ԾՆՈՒՆԴ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆ-Ք ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 33-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ**

Շաբաթ, 21 Սեպտեմբեր, 2024-ին, Ս. Աստուածածնի Ծննդեան տօնին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի մեկնեցաւ Սուրբ Աստուածածնայ Տաճար եւ «Հրաշափառ»ով մուտք գործեց Տաճարէն ներս:

«Ճաշու» ժամերգութենէն ետք տօնի Սուրբ եւ Անմահ Պատարագը Սուրբ Կոյսի Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց հանդիսապետ՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան:

Յաւարտ Սուրբ Պատարագի հանդիսապետութեամբ պատարագիչ Սրբազան Հօր՝ Հայաստանի Հանրապետութեան 33-րդ տարեդարձին առիթով կատարուեցաւ «Հանրապետական Մաղթանք», որու ընթացքին հանդիսապետ Սրբազան Հայրը ընթերցաւ Երջանկայիշատակ Թորգոմ Պատրիարք Գուշակեանի հեղինակած աղօթք-խնդրանքն առ Աստուած, որ մասնաւորապէս կ'ըսէ.

«...Օրհնեա, Տէր, եւ զաշխարհ մեր եւ զերկիր հայրենի, զի յորում զառաջինն հաստատեցիր զտեղի դրախտին երանութեան, եւ զոր ապա զգարս բազումս ձեռք անօրինացն արարին վայրս աւերակաց, քառահոլով վտակացն պարարտութեամբ վերստին ծաղկազարդեալ պայծառասցի ի վայելումն ամենայն բարութեանց երկնաւորաց եւ երկրաւորաց. սրբեա զեկեղեցիս մեր եւ զվանորայս որ ի նմին, զգարատունս մեր եւ զյարկս գթութեան, եւ զամենայն սահմանս նորա պարսպեա պահպանութեամբ քով ընդդէմ յարձակմանց թշնամոյն:

Օրհնեա, Տէր, զամենայն բան բարի որ ի նմին, եւ զկոշումն իւր զլիսովին, զանունդ Հայաստան:

Հայաստանդ անուն ցանկալի, ձայն գորովական եւ փարելի, երկնաւոր երգոցն նուագաց արժանի, յորում ամենայն յուշքն անցելոյն եւ յոյսք ապառնեացն պահին, զոր ոչ կարացին հանել քերել ի շրթանց մերոց մանաւանդ թէ եւ ի սրտից բռունցք աշխարհիս եւ դիպուածք ժամանակաց, հնչեսցէ այժմ ծագաց ի ծագս երկրի, եւ որք ի հեռաստանեայ սահմանս աշխարհի սփռեալ կան նժդեհութեամբ, ամենայն հայկազունք ի լուր նորա որպէս ամպս թռուցեալս ձագախառն երամովին եկեսցէն առ նա, զի փրկութիւն Տեառն եհաս մեզ:

...Եւ դուք ժողովուրդ Հայոց, որդիք Հայկայ եւ որդեգրեալք եկեղեցւոյս Հայաստանեայց, առէք զսպառազինութիւն հաւատոյդ դիք ի զլուխս ձեր զսաղաւարտ յուսոյն, արի՛ք ընդ առաջ, եւ երգեսցուք ամենեքեան.

Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն»:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ ՄԻՋԵԿԵՂԵՅԱԿԱՆ
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԻՒՌՈՆՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ
ՎԵՐԱԾԾՄԱՆ ԱՌԻԹՆԵՐՈՎ**

Էջմիածին՝ վայր, որուն սրբութիւնը մատնանշուեցաւ Տիրոջ Միածին Որդւոյն գալուստով: Էջմիածինը իւրաքանչիւր Հայի, իւրաքանչիւր քրիստոնեայի համար սրբու-

թեան, հաւատքի ու սրբազան երկիրդածութեան խորհրդանիշն է: Հոն կը հատուին ոչ միայն Հայ ժողովուրդի պատմութեան խաչուղիները, այլեւ Հայոց հաւատքի եւ աստուածավախութեան երկնաւոր ճանապարհները: Էջմիածինը ոչ միայն Հայոց քաջարի սխրագործութիւններու, աշխարհակալ իշխանութեան կեդրոնն է՝ վաղեմի մայրաքաղաքը, այլեւ Հայոց հաւատքի կեդրոնը, համայն հայութեան եւ քրիստոնէութեան կեդրոնը, ուր պիտի օրհնուէր 21-րդ դարու շորրորդ Սուրբ Միւռոնը եւ պիտի կոչուէր «Դրոշմ Ինքնութեան»:

Զորեքշաբթի, 25 Սեպտեմբեր, 2024-ին, Սուրբ Աթոռոյս եպիսկոպոսներէն՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Դիւանապետ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի պաշտօնական այցով Թէլ-Ավիվի Պէն Կուրիօն օդակայանէն ճամբայ ելաւ դէպի Հայաստան՝ մասնակցելու Սեպտեմբերեան տօնակատարութիւններուն:

Ուրբաթ, 27 Սեպտեմբեր, 2024-ին, ժամը 16:00-ին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Վեհարանի մէջ տեղի ունեցաւ միջեկեղեցական պատուիրակութիւններու եւ ներկայացուցիչներու հանդիպում, որուն կը մասնակցէին Սրբալոյս Միւռոնի օրհնութեան եւ Մայր Տաճարի վերածման արարողութեանց զոյգ առիթներով Հայաստան ժամանած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակ, Արաբական Միացեալ Էմիրութեանց եւ Քաթարի Հայոց թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սարգսեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատուիրակ՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Մաշալեան, Քրիստոնէական եկեղեցիներու եւ միջեկեղեցական կառույցներու շուրջ 20 պետեր եւ ներկայացուցիչներ, Նուիրապետական Աթոռներու միաբաններ, Մայր Աթոռոյ մէջ պաշտօնավարող եպիսկոպոսներ եւ Հայ եկեղեցւոյ թեմակալ առաջնորդներ:

Հանդիպումն սկսաւ Տէրունական աղօթքով, ապա ներկաներուն բարիգալստեան խօսք ըսաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական յարաբերութեանց բաժնի տնօրէն՝ Հոգեշնորհ Տ. Գարեգին Վարդապետ Համբարձումեան: Հայր Սուրբն իր խօսքին մէջ անդրադարձաւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդի կեանքէն ներս Սրբալոյս Միւռոնի օրհնութեան եւ Մայր Տաճարի վերածման կարեւորութեանը, ինչպէս նաեւ իր երախտագիտութիւնը յայտնեց Քոյր Եկեղեցիներու եւ միջեկեղեցական կառույցներու ներկայացուցիչներուն սրբազան արարողութեանց մասնակից եւ աղօթակից դառնալու համար: Ապա ուրախալի այս առիթով իրենց հովուապետերու ուղերձներով եւ ողջոյնի խօսքերով հանդէս եկան Մայր Աթոռ ժամանած Քրիստոնէական եկեղեցիներու եւ միջեկեղեցական կառույցներու ներկայացուցիչները:

Երեկոյի ընթացքին գեղարուեստական կատարումներով հանդէս եկաւ Հայաստանի «Նոր անուններ» երաժշտական խումբը:

Այնուհետեւ աշխարհի տարբեր կողմերէ Մայր Աթոռ համախմբուած եկեղեցականներուն իր հայրապետական ողջոյնը փոխանցեց Նորին Սրբութիւն Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայոց Հայրապետն իր խօսքին մէջ ի մասնաւորի ընդգծեց. «Սրբալոյս Միւռոնի օրհնութեան եւ Մայր Տաճարի վերածման այս նուիրական առիթով մենք բոլորս հաւաքուած ենք այստեղ՝ որպէս մէկ Աստուծոյ զաւակներ: Խորապէս զգացուած ենք Հայոց Եկեղեցւոյ կեանքէն ներս կարեւորագոյն այս արարողութեանց ձեր մասնակցութեան համար: Զեղմէ իւրաքանչիւրիդ աղօթական ներկայութիւնը Մայր Աթոռի մէջ քաջալերանք եւ զօրակցութիւն է մեր ժողովուրդի զաւակ-

ներուն եւ հաւաստիքն է մեր ազգի եւ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ հանդէպ տաժած ձեր անկեղծ յարգանքի»:

Անդրադառնալով Մայր Տաճարի խորհուրդին՝ Հայոց Հովուապետն ըսաւ. «Քրիստոսահիմն եւ լուսաւորչահաստատ Մայր Տաճարը Հայ ժողովուրդի կեանքի, անոր մաքառումներու եւ յաղթանակներու, անոր կորուստներու եւ ձեռքբերումներու վկան է, ուրտեղէն դարեր շարունակ հաւատքի շողեր ցոլացած են ու զօրացուցած են հոգիները հայորդեաց, ինչպէս եւ բազում ուխտաւորներու եւ այցելուներու»:

Ամենայն Հայոց Հայրապետը, անդրադարձ կատարելով Սուրբ Էջմիածնի եւ Քոյր Եկեղեցիներու միջեւ առկայ յարաբերութեանց եւ փոխգործակցութեան՝ հաստատեց, որ Հայոց Եկեղեցին միջեկեղեցական այցերու, համատեղ ձեռնարկներու եւ ծրագիրներու միջոցաւ մշտապէս իր օգտակար ներդրումը բերած է միջեկեղեցական յարաբերութիւններու սերտացումի եւ արգասաւորման գործին մէջ եւ նպաստած է քրիստոնէական համերաշխութեան եւ եղբայրասիրութեան ոգիի ամրապնդման: «Եղբայրական այս սիրոյ ականատեսը եղանք մեր երկրի եւ ժողովուրդի համար աղէտալի շրջանին, երբ 2020 թուականի Սեպտեմբերին Ատրպէյճանը Թուրքիոյ բացայայտ աջակցութեամբ եւ միջազգային ահաբեկչական խմբաւորումներու ներգրաւումով լայնածաւալ պատերազմական գործողութիւններ սանձազերծեց Արցախի Հանրապետութեան դէմ: 2023 թուականին Ատրպէյճանի ցեղասպան գործողութիւններու հետեւանքով բռնազաւթուեցաւ եւ հայաթափուեցաւ Արցախը: Այդ տագնապալի օրերուն մեր Քոյր Եկեղեցիները զօրավիգ եղան մեզի իրենց աղօթքներով, ընդդէմ անարդարութեան ու ոճրագործութեան իրենց ընդվզումով: Այսօր ալ անհրաժեշտ են հետեւողական ջանքեր գործադրել բռնի տեղահանուած արցախցիներուն՝ հայրենի բնօրրան վերադարձի իրաւունքի պաշտպանութեան, Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան եւ տակաւին գերութեան մէջ գտնուող մեր զաւակներու ազատ արձակման համար», - ըսաւ Նորին Սրբութիւնը՝ իր երախտագէտ զգացումները փոխանցելով Քոյր Եկեղեցիներուն եւ միջեկեղեցական կառույցներուն Հայ ժողովուրդին դժուարին այս տարիներուն ցուցաբերած զօրակցութեան համար:

Իր խօսքի վերջաւորութեան Վեհափառ Հայրապետը խօսեցաւ նաեւ Քոյր Եկեղեցիներու եւ Հայ Եկեղեցւոյ աշխարհասփիւռ թեմերու միջեւ ձեւաւորուած սերտ գործակցութեան մասին, որու շնորհիւ կը զօրանայ փոխըմբռնումի եւ միմեանց նեցուկ ըլլալու ոգին. «Քրիստոսի եւ Անոր հօտին ծառայելու մեր առաքելութեան մէջ միասնութիւնը մեր առաջնորդող լոյսն է: Ուստի շարունակենք մեր ճանապարհը՝ միմեանց նկատմամբ հոգատարութեամբ, սիրով ու յարգանքով», - պատգամեց Հայոց Հայրապետը՝ հայցելով, որ Երկնաւոր Տէրն իր շնորհներու ներքոյ պահէ աշխարհը եւ պարգեւէ խաղաղ, ապահով ու բարօր կեանք բոլոր ժողովուրդներուն եւ օրհնէ իր Սուրբ Եկեղեցին եւ Տիրոջ այգիի անյոգնաբեկ բոլոր մշակները:

ՆԱԽԱԿԱՏԻՔ.

ՀԱՅՈՑ ՀԻՆԱՒՈՒՐՅ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՒՆՈՎ ՎԵՐԱԾՈՒԵՑԱԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

Ուրբաթ, 27 Սեպտեմբեր, 2024-ին, Երեկոյեան ժամը 8-ին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարուեցաւ Նաւակատիքը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի: Ամենայն Հայոց Հայրա-

պետը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակ, Արաբական Միացեալ Էմիրութեանց եւ Քաթարի Հայոց թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սարգսեանի, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատուիրակ՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Մաշալեանի, Հայ Առաքելական Եկեղեցւոյ արքեպիսկոպոսներու եւ եպիսկոպոսներու հետ միասին կատարեց Մայր Տաճարի վերածնունդը:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատուիրակ՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան վերածեց Մայր Տաճարի Մկրտութեան Աւագանը:

Նաւակատիքը նորաշէն տաճարի կամ եկեղեցւոյ բացումի, տարեգարծի ու նուիրագործութեան հանդէսն է: Այն իբրեւ առանձին տօն կը կատարուի խաչվերացի տօնի նախընթաց շաբաթ օրը, 4-րդ դարու բիւզանդական կայսերուն հիշելին նախաձեռնութեամբ Երուսաղէմի Սուրբ Յարութեան Տաճարի շինութենէ յետոյ այն նուիրագործելու եւ օծելու տարեգարծի օրը, որն ամբողջ քրիստոնեայ աշխարհի համար կարեւոր յիշատակ է:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԲԱՐԵՆՕՍԱԿԱՆ ԿԱՐԳ Ի ԾԻԾԵՌՆԱԿԱՐԵՐԴ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ Ի ԵՌԱՔԼՈՒՐ

Շաբաթ, 28 Սեպտեմբեր, 2024-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ Սրբալոյս Միւռոնի օրհնութեան եւ Մայր Տաճարի վերածման արարողութեանց զոյգ առիթներով Հայաստան ժամանած Նուիրապետական Աթոռներու ներկայացուցիչները, Քրիստոնէական Եկեղեցիներու եւ միջեկեղեցական կառույցներու պատուիրակութիւններն ու ներկայացուցիչները, Մայր Աթոռոյ մէջ պաշտօնավարող եպիսկոպոսները, Հայ Եկեղեցւոյ թեմակալ առաջնորդները այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր:

Մեծ Եղեռնի յուշարձանին առջեւ ծաղկեպսակ զետեղելէ ետք, հանդիսապետութեամբ Սուրբ Աթոռոյս միաբան՝ Գերաշնորհ Տ. Վիգէն Արքեպիսկոպոս Ալքազեանի, կատարուեցաւ Հայոց Յեղասպանութեան Սուրբ Նահատակներու բարեխօսական կարգ:

Նոյն օրը, կէսօրուան ժամը 12:00-ին, եկեղեցականներն այցելեցին նաեւ «Նոաբըլուր» զինուորական պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու յանուն հայրենիքի իրենց կեանքն ընծայաբերած հայորդիներու յիշատակին եւ Հոգեհանգստեան կարգ կատարելու անոնց հոգիներու հանգստութեան եւ խաղաղութեան համար:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ 21-ՐԴ ԳԱՐՈՒ ԶՈՐՐՈՐԴ ՄԻՒՌՈՆԻ, ՈՐ ԿՈԶՈՒԵՅԱԻ «ԴՐՈՇՄ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ»

Շաբաթ, 28 Սեպտեմբեր, 2024-ին, Սուրբ Գէորգ Զօրավարի տօնի երեկոյեան ժամը 5-ին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ կատարուեցաւ Միւռոն-օրհնութեան սրբազան արարողութիւնը: Մայր Աթոռի բացօթեայ խորանին առջեւ կատարուող Միւռոնօրհնէքը 21-րդ դարու, Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ նուիրագործուող չորրորդ մեծ իրողութիւնն է, որ կոչուած է «Դրոշմ Ինքնութեան»:

Միւռոնօրհնութեան սրբազան արարողութեան ներայ էին Նուիրապետական Աթոռ-

ներու ներկայացուցիչներ, Մայր Աթոռի մէջ պաշտօնավարող եպիսկոպոսներ, Հայ Եկեղեցւոյ թեմակալ առաջնորդներ, թեմական պատուիրակութիւններ, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամներ, ՀՀ Ազգային Ժողովի պատգամաւորներ, ՀՀ կառավարութեան անդամներ, պետական այրեր, ազգային բարերարներ, մշակոյթի, գիտութեան, հասարակական եւ քաղաքական գործիչներ, Հայաստանէն եւ Սփիւռքէն ժամանած բազմահազար ուխտաւոր հաւատացեալներ:

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ այս կարեւորագոյն պատմական իրադարձութեան Հայ Եկեղեցւոյ հոգեւոր դասուն եւ համայն Հայ ժողովուրդին աղօթակից էին նաեւ Քրիստոնէական եկեղեցիներու եւ միջեկեղեցական կառույցներու պատուիրակներն ու ներկայացուցիչները:

Տէրունական աղօթքէն յետոյ Հայրապետական հանդիսաւոր թափօրը Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առջեւէն շարժեցաւ դէպի Մայր Աթոռի՝ Սուրբ Տրդատ արքայի անունը կրող Բաց Խորան: «Խորհուրդ Խորին» եւ «Ուրախ Լեր» շարականներու երգեցողութեան եւ Մայր Տաճարի զանգակներու աւետաբեր ղողանջներու ներքոյ, խաչերու եւ խաչվառներու առաջնորդութեամբ, Ամենայն Հայոց Հայրապետն օրհնելով ներկայ ժողովուրդը, ամպհովանիի ներքոյ ուղղուեցաւ դէպի Բաց Խորան: Վեհափառ Հայրապետին կ'ընկերանար Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Մաշալեան:

Վեհափառ Հայրապետի առընթերականներն էին Գուգարաց թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Եպիսկոպոս Յակոբեան եւ Գերմանիոյ Հայոց թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Սերովբէ Եպիսկոպոս Իսախանեան:

Դարերէն եկած աւանդութեան համաձայն, թափօրի առջեւէն կը տարուէին Հայաստանեայց Եկեղեցւոյ սրբութիւնները եւ Սրբալոյս Միւռոնի նիւթերը. Սկեւռայի մասունքներու պահարանին կրկնօրինակը, Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակներու մասունքներու պահարանը, Աշոտ Երկաթի խաչ մասունքարանը, Կենաց Փայտի մասունքով խաչը, Քրիստոսի կողը խոցած Սուրբ Գեղարդը, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Աջը, Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի պահոցէն այս առթիւ դուրս բերուած Վեհափառի Աւետարանը, Սուրբ Ղուկաս Աւետարանչի մասունքակիր Աջը, Սուրբ Անահիա առաքեալի մասունքակիր Աջը, Սուրբ Սահակ Պարթեւ Հայրապետի մասունքը, Սուրբ Թադէոս առաքեալի մասունքակիր Աջը, Սուրբ Բարդուղիմէոս առաքեալի մասունքակիր Աջը, Հին Միւռոնով լի Միւռոնաթափ մեծ աղանին, Ծաղկանց նիւթի եւ Բալասանի սափորները:

Մայր Տաճարի երգչախումբը «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ Սուրբ Տրդատ Բաց Խորանին առջեւ դիմաւորեց Հայրապետական թափօրը, ապա միասնական Տէրունական աղօթքով սկսաւ Միւռոնօրհնութեան սրբազան արարողութիւնը:

Միւռոնօրհնութիւնը կը վերապահուի միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ կու գայ դարերու խորէն Սուրբ Լուսաւորչէն սկսեալ: Սկիզբը «Որ գշնորհս» շարականի երգեցողութեան ներքոյ բուրվառակիրները խնկարկեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորած եպիսկոպոսաց դասուն, ապա ընթերցուեցան Սուրբ Միւռոնին նուիրուած աղօթքներ: Աւետարանի ընթերցումէն յետոյ երգուեցաւ «Բաց մեզ Տէր» շարականը, որու ընթացքին խորան հրաւիրուեցաւ Սրբալոյս Միւռոնի կնքահայրը, որ եւ բացաւ Սուրբ Միւռոնի կաթսային բերանը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը միւռոնաեփ մեծ կաթսային մէջ հեղեց

բալասանը եւ 40 տեսակի զանազան ծաղիկներէ ու իւղէ պատրաստուած նիւթը, որմէ յետոյ ձեռամբ Նորին Սրբութեան կաթսայի մէջ լեցուեցաւ նաեւ Անթիլիասի մէջ օրհնուած Միւռոնը՝ մատուցուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին կողմէ:

Սրբազան աւանդութեան համաձայն, «Առաքելոյ աղանոյ» շարականի երգեցողութեան ներքոյ Ամենայն Հայոց Կաթողիկոսը միւռոնաթափ մեծ աղանիով կաթսայի մէջ լեցուց նաեւ հին Միւռոնը՝ նորին փոխանցելով Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ օրհնուած սրբալոյս Միւռոնի զօրութիւնն ու շնորհը: Ապա Նորին Սրբութիւնը օրհնեց նոր Միւռոնը, տեառնագրեց եւ խառնեց նաեւ Կենաց Փայտի մասունքակիր խաշով, Աստուածամուկ Սուրբ Գեղարդով եւ Հայոց հաւատքի հայր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Աջով: Այնուհետեւ Հայոց Հայրապետն իր պատգամն ուղղեց ներկայ հաւատացեալ եւ ուխտաւոր ժողովուրդին եւ համայն հայութեան, որմէ յետոյ «էջ Միածինն ի Հօրէ» շարականի ներքոյ Նորին Սրբութիւնը, եպիսկոպոսաց դասը համբուրեցին նորօրհնեալ Միւռոնի կաթսան:

Արարողութիւնն իր լրումին հասաւ Տէրունական աղօթքով եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սուրբ Գեղարդով ներկաներու օրհնութեամբ:

Ուխտաւոր ժողովուրդին հնարաւորութիւն տրուեցաւ հպուելու Սուրբ Միւռոնի կաթսային եւ ստանալու նոր Միւռոնի օրհնութիւնը:

Սրբալոյս Միւռոնի օրհնութեան արարողութեան վերջաւորութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորած հոգեւորականաց դասու թափօրը Հայրապետական մաղթերգի ներքոյ ուղղուեցաւ դէպի Վեհարան:

Սրբալոյս Միւռոնի օրհնութեան արարողութեան մասնակից՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատուիրակներն էին՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան՝ ընկերակցութեամբ Հոգեշնորհ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեանի եւ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԻՒՌՈՆՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«Որ որ օծցի ի սմանէ երկիւղած լիցի յԱստուծոյ եւ աներկիւղ ի հակառակորդէն»:

«Ով օծուի Սրանով (Միւռոնով), երկիւղած պիտի դառնայ Աստուծոյ եւ անվախ թշնամուց»:

(Կանոն Սրբալոյս Միւռոնի Օրհնութեան)

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ,

Փառք ենք վերառաքում առ Բարձրեալն Աստուած, որ շնորհը պարգեւեց Մեզ Վարդայ Սուրբ Խաչի տօնի նախօրէին՝ Սուրբ Գէորգ Զօրավարի յիշատակի օրը, կատարելու Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը, որը անցնող տարիների աղէտաբեր իրադարձութիւնների պատճառով անհնար եղաւ իրականացնել: Թող Աստուծոյ բարեգութ կամքով նորօրհնեալ Սրբալոյս Միւռոնը երկնապարգեւ բարիքներ բերի մեր կեանքից ներս, հոգեւոր ուժ ու վերյառնումի զօրութիւն՝ պատերազմի արհաւիրքներ ու կորուստներ կրած մեր ժողովրդին:

Սիրելիներ, Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը մեզ յիշեցնում է նուիրական օրերը հայոց դարձի: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի ձեռամբ, բիբլիական Արարատի վեհապանծ հայեացքի ներքոյ, մեր ժողովուրդը մկրտուեց եւ օծուեց մեր Տիրոջ կողմից

օրհնուած եւ Սուրբ Թադէոս առաքեալի միջոցով Հայաստան բերուած սուրբ իւղով եւ մէկ դարձաւ Քրիստոսով ու իր Սուրբ Եկեղեցիով: Ազգս հայոց շնորհը ստացաւ լինելու Աստծոյ սեփական ժողովուրդ եւ առաջինը աշխարհում քրիստոնէութիւնը հռչակելու պետական կրօն: Հաւատակերտ այդ ժամանակներից ի վեր փրկութեան սուրբ լեռն Արարատ եւ Միաձնաէջ Մայր Տաճարը դարձան սրբազան եւ անշնչելի խորհրդանիշ մեր հաւատքի ամրութեան եւ հայոց յաւերժ լինելութեան:

«Ով օծուի Միւռոնով, երկիւղած պիտի դառնայ Աստծուց եւ անվախ՝ թշնամուց»:
Միւռոնօրհնութեան աղօթքի ազդու այս խօսքերն են այսօր մեծ ուժականութեամբ հըն-
չում ի լուր ամէնքիս: Մեր հայրերի այս պատգամը ուղեկցել է մեր ժողովրդին պատմու-
թեան ողջ ընթացքում, զօրացրել ապրելու Աստծոյ սիրոյ երկիւղով եւ արիացրել թըշ-
նամեաց դէմ պայքարներում, քաջալերել լինելու պաշտպանը սրբազան արժէքների,
մեր ինքնութեան եւ նուիրեալը հայրենիքին ծառայութեան:

Միւռոնը տեսանելի նշանն է Սուրբ Հոգու ներկայութեան: Սուրբ Միւռոնի դրոշմով
աստուածային օրհնութեան աղբիւրն է բացուում անհատի եւ ժողովրդի կեանքում: Միւ-
ռոնով օծեալը արժանի է դառնում աստուածային երկնառաք շնորհների, նորոգում բա-
րին խորհելու եւ արարելու, ապրելու Աստծոյ երկիւղով եւ անվախ՝ ընդդէմ չարի: Սուրբ
Միւռոնի կնիքը հաստատումն է Քրիստոսի հետ միութեան եւ Սուրբ Եկեղեցուն անդա-
մազրութեան, այլեւ ազգային ինքնութեան եւ առհաւատչեան առ Աստուած հաւատար-
մութեան:

Սրբալոյս Միւռոնը դարեդար միմեանց է շաղկապել աշխարհասփիւռ մեր ժո-
ղովրդի զաւակներին, միաւորել հայրենիքն ու սփիւռքը: Սուրբ Միւռոնով մենք մէկ ազգ
ենք եւ մէկ Եկեղեցի: Այսօր էլ Սուրբ Միւռոնը, նուիրապետական Աթոռների գահակալ-
ների, թեմակալ առաջնորդների միջոցով ընծայուելով աշխարհասփիւռ մեր ժողովրդ-
դին, վերստին ամրապնդում է ի հոգեւորս անլուծանելի մեր միասնականութիւնը:
Միւռոնը դարձել է հայութեան երակներում հոսող արին, որ հոգեւոր ներուժով զօրաց-
նում է ազգին արիութեամբ դիմագրաւելու փորձութիւնները, ինչպէս եւ մերօրեայ մար-
տահրաւէրները՝ ըստ մեր հայրերի աղօթական յորդորի. «Միւռոնով օծեալը երկիւղած
է միայն ու միայն Աստծուց, եւ անվախ՝ թշնամիներից»:

Սիրելիներ, աշխարհն այսօր կրկին փոթորկուած է հակամարտութիւններով ու հա-
կառակութիւններով, որոնք խաթարում են ներդաշնակութիւնը ընտանեկան կեանքում,
մարդկային յարաբերութիւններում եւ հասարակութեան մէջ սերմանում թշնամանք ու
անհանդուրժողութիւն, հրահրում պատերազմ, սփռում աւեր ու արհաւիրքներ: Մեր եր-
կիրն ու ժողովուրդը նոյնպէս գտնուում են անվտանգային լրջագոյն սպառնալիքների
եւ աղէտներից ու վշտագին կորուստներից վերյառնումի հրամայականի առջեւ: Մենք
հաւատում ենք, որ աշխարհն անտարբեր չէ ցաւի ու բռնութեան նկատմամբ, հաւա-
տում ենք, որ մարդկային սրտերում չեն ցամաքել սէրն ու կարեկցանքը, արդարութիւն
ու իրաւունքի գերակայութիւն հաստատելու ձգտումը: Միւռոնօրհնութեան նուիրական
այս արարողութիւնը պատեհ առիթ ունենալով՝ վերստին դիմում ենք միջազգային հան-
րութեանը եւ մեր քոյր Եկեղեցիներին, ի դէմս մեզ աղօթակից եկեղեցական եւ դիւա-
նագիտական ներկայացուցիչների, որպէսզի ազդու միջոցներ գործադրուեն զսպելու
Ատրպէյճանի ծաւալապաշտական նկրտումները եւ ուժի դիրքերից ներկայացուող նո-
րանոր պահանջները, ինչպէս եւ վերադարձնելու Հայաստանից զաւթուած սահմանա-
մերձ տարածքները, պաշտպանելու բռնի տեղահանուած արցախահայութեան ոտնա-
հարուած իրաւունքները, ազատ արձակելու գերեվարուած հայորդիներին եւ իւրացումից

ու ոչնչացումից փրկելու Արցախի հայկական հոգեւոր մշակութային ժառանգութիւնը:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այս բարդ իրավիճակի կարգաւորման գործում հիմնական պարտաւորութիւնն ու պատասխանատուութիւնը մերն է, հարկ է համախմբուել, զերծ պահել հայրենի մեր երկիրը նոր ցնցումներից ու կորուստներից, փարատել ապագայի շուրջ առկայ տագնապներն ու մտահոգութիւնները, վերատեսուիթեան ենթարկել սխալ ու ազգավնաս ընթացքները, առաւել ամրապնդել Հայաստան-սփիւռք յարաբերութիւնները, ներքաղաքական կեանքում սկիզբ դնել առողջ երկխօսութեան եւ ելքի ուղիներ գտնել հայրենիքում մեր ժողովրդի ապահով ու անվտանգ կեանքի վերականգնման՝ մեզ ուղեկից դարձնելով արդարութիւնը, խիզախութիւնն ու ազնուութիւնը:

Այս պայմաններում առ Աստուած ապաւինութիւնն ու յոյսը խարիսխ եւ զօրութիւն են՝ մեզ պատուհասած արհաւիրքներից վերյառնումի եւ զօրեղ հայրենիքի կերտման: Արդ, սիրելիներ, թող այս նոր միւռնոն լինի յոյսի եւ վերյառնումի միւռնոն, լուսաշող վրկայութիւն ազգային ու հայրենական մեր կեանքը վերընձիւղելու վճռականութեան եւ ներքին ու արտաքին մարտահրաւէրների յաղթահարմամբ մեր բարօր գալիքը կառուցելու հաստատակամութեան:

Հայրապետական Մեր յորդորն ու պատգամն է աշխարհասփիւռ Մեր զաւակներին՝ միւռնադրոշմ պահել մեր կեանքի ընթացքը, հաստատուն մնալ մեր պետութեան շահերի պաշտպանութեան դիրքերում եւ չվտանգել ազգի ապագան, քանզի ով օծուած է Սրբալոյս Միւռնոնով, չի կարող ուրանալ անկախ հայրենիք ունենալու իր հայրերի երազները, հրաժարուել սեփական պատմութիւնից: Ով օծուած է Միւռնոնով, չի կարող մերժել իր նախնեաց ժառանգութիւնը, նսեմացնել սրբագործուած արժէքները, եղծել իր ազգային դիմագիծն ու իղձերը: Ով օծուած է Սրբալոյս Միւռնոնով, չի կարող անարգել ու արհամարհել հայրենակից ու բարեկամ իր քոյրերին ու եղբայրներին, քանզի ասուած է. «Ով չի սիրում իր եղբօրը, որին տեսնում է, ինչպէ՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա Յովհ. 4.20): Ով օծուած է Սրբալոյս Միւռնոնով, կոչուած է դառնալու ճշմարտութեան առաջամարտիկ, բարիքի կերտող եւ սիրոյ քարոզիչ: Եւ վերջապէս, ով օծուած է Սրբալոյս Միւռնոնով, նա երկիւղած պիտի լինի միայն ու միայն Աստծուց, եւ աներկիւղ՝ թշնամիների ու սպառնալիքների առջեւ, քանզի, ինչպէս ասում է Սուրբ Առաքեալը, «Աստծոյ տկարն աւելի զօրեղ է, քան մարդկային զօրութիւնը» (Ա Կորնթ. 1.25):

Հայրապետական Մեր յորդորն է ձեզ, սիրելի արցախահայեր, աննկուն եւ անվրհատ դիմագրաւէք նեղութիւններն ու դժուարութիւնները: Արցախեան ոճրագործութիւնը իրականացուել է ոչ միայն ձեր, այլեւ մեր ողջ ժողովրդի հանդէպ: Ազգովի հետեւողական պիտի լինենք հայրենի բնօրրանում ազատ ու արժանապատիւ ապրելու ձեր իրաւունքի պահանջատիրութեան մէջ: Այս սուրբ խորանից Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում ձեզ՝ հայցելով, որ երկնային շնորհները յեղուեն ձեր կեանքից եւ ընտանեկան յարկերից ներս: Որպէս Հայրապետ Ամենայն Հայոց՝ հաւատում ենք մեր ազգի ներքին ուժականութեանն ու մեր ժողովրդի վերյառնումին, մեր լուսաւոր ու յաղթական գալիքին:

Միւռնօրհնութեան հոգենորոգ այս առիթով Մեր սէրն ու բարեմաղթանքներն ենք բերում արարողութեանը մասնակից եկեղեցական, պետական, քաղաքական, դիւանագիտական գործիչներին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նուիրեալ ազգային բարերարներին եւ ուխտաւոր հաւատացեալներին: Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք յայտնում Միւռնօրհնութեան կնքահայրութիւնը ստանձնած ազգային մեծ բարե-

րար տիար Սամուէլ Կարապետեանին, ով իր նշանակալի աւանդն է բերել ազգային եւ հայրենական մեր կեանքի շէնութեանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառութեանը: Աստուծոյ ամենաուստ օրհնութիւններն ու մշտանորոգ յաջողութիւններ Ձեզ, սիրելի բարերար տիար Կարապետեան, եւ Ձեր բարեպաշտ ընտանիքին:

Աղօթում ենք Երկնաւոր մեր Հօրը, որ Սուրբ Հոգու շնորհներով աշխարհում առատանան հաւատոյ գործերը, սէրն ու բարին, եւ զօրանան խաղաղութեան ու համերաշխութեան ուղիները:

Թող Սուրբ Հոգու շնորհաց հանապազ յեղումով անվտանգ ու աներեր լինի մեր հայրենիքը, բարեզարդ՝ համայն մեր ժողովրդի կեանքը, պայծառ ու անսասան՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Թող Սուրբ Միւռոնի կենարար լոյսով յաւերժաշող մնայ Լուսաւորչի կանթեղը հայոց աշխարհում այսօր եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԾՈՒՄ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ՝

Կիրակի, 29 Սեպտեմբեր, 2024-ին, Վարազայ Սուրբ Խաչի տօնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ վերածուեցաւ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի Աւագ Խորանի Սուրբ Սեղանը եւ մատուցեցաւ Հայրապետական Սուրբ Պատարագ:

Մայր Տաճարի վերածման եւ Պատարագի սրբազան արարողութեան ներկայ էին ՀՀ նախագահ Տիար Վահագն Խաչատուրեան, ՀՀ վարչապետ Տիար Նիկոլ Փաշինեան, ՀՀ ԱԺ նախագահ Տիար Ալէն Սիմոնեան, ՀՀ կառավարութեան եւ անվտանգութեան խորհուրդի անդամներ, Հայաստանի մէջ հաւատարմագրուած օտարերկրեայ դիւանագիտական առաքելութիւններու ղեկավարներ, Նուիրապետական Աթոռներու ներկայացուցիչներ, Մայր Աթոռի մէջ պաշտօնավարող եպիսկոպոսներ, Հայ Եկեղեցւոյ թեմակալ առաջնորդներ, թեմական պատուիրակութիւններ, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամներ, Քրիստոնէական եկեղեցիներու եւ միջեկեղեցական կառույցներու պատուիրակներ ու ներկայացուցիչներ, ազգային բարերաններ, մշակոյթի, գիտութեան եւ հասարակական գործիչներ, Հայաստանէն եւ Սփիւռքէն ժամանած ուխտաւորներ:

Հայրապետական հանդիսաւոր թափօրը Վհարանէն ուղղուեցաւ դէպի Մայր Տաճար: Խաչերու եւ խաչվառներու առաջնորդութեամբ, ուխտաւորներու ուղեկցութեամբ Ամենայն Հայոց Հայրապետը եւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Մաշալեանը, օրհնելով ներկայ ժողովուրդը՝ ամպհովանիի ներքոյ եւ «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեցին Մայր Տաճար:

Տէրունական աղօթքէն յետոյ ձեռամբ Հայոց Հայրապետի վերածուեցաւ Աւագ Խորանի Սուրբ Սեղանը, ապա Նորին Սրբութիւնը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ «Սուրբ Էջմիածին» պատուոյ բարձր շքանշանին եւ «Դուստր Սուրբ Էջմիածին» տիտղոսին ու Հայրապետական շքանշանին արժանացուց Հայ Եկեղեցւոյ ազգային բարերարներուն, որոնց ընծայաբերումներով իրականացուեցան Մայր Տաճարի ամբողջ վերանորոգութեան աշխատանքները:

Այնուհետեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ մատուցուեցաւ Սուրբ եւ Անման Պատարագ, որու ընթացքին Նորին Սրբութիւնն իր Հայրապետական պատգամը յղեց ողջ հայութեան:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

«Տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է»

«Սուրբ է այն տեղը, ուր կանգնած ես»

(Ելից 3:5):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Տիրոջ ողորմած կամքով միասնական աղօթակցութեամբ կատարեցինք Քրիստոսահիմն Մայր Տաճարի վերածման արարողությունը: Փառք եւ գոհություն ենք մատուցում Ամենակալին, որ նորոգութեան երկար աշխատանքներից յետոյ այլեւս ամրակալւած ու բարեզարդուած եւ այսօր նոր միւլտոնով վերածուած Մայր Տաճարը վերստին իր դռներն է բացում հայաստանաբնակ եւ աշխարհասփիւռ մեր հաւատաւոր զաւակների, ուխտաւորների եւ այցելու հիւրերի առջեւ:

Նուիրական այս պահին մեր հոգում արձագանգում է մեծ մարգարէին՝ Աստուածատէս Մովսէսին ուղղուած Ամենակալ Տիրոջ խօսքը. «Սուրբ է այն տեղը, ուր կանգնած ես» (Ելից 3.5):

Բարձրեալի օրհնութեամբ սուրբ է հայրենի մեր երկիրը, ուր ջրհեղեղից յետոյ Աստուած ընդունեց տապանակիր Արարատի հովանու ներքոյ Նոյ Նահապետի առաջին ընծայաբերությունը եւ ուխտ հաստատեց մարդկութեան հետ՝ ասելով. «Այլեւս չեմ անիծի երկիրը մարդկանց գործերի համար» (Ծննդ. 8.21):

Սուրբ է Արարատեան այս երկիրը, ուր քաջազուն ու ազատատենչ հայոց Նահապետ Հայկը յաղթեց բռնակալ Բէլին եւ խորտակեց չարի զօրութիւնը: Սուրբ է այս տեղը, ուր, Հայոց առաքելապատիւ Հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի տեսիլքով, Աստծոյ Միածին Որդին երկնքից իջաւ եւ լուսազարդելով այս նուիրական վայրը՝ հաստատեց համայն հայութեան հոգեւոր կեդրոնը, սրբութիւն սրբոց Միածնաէջ Մայր Տաճարը: Յիւրաի, Սուրբ էջմիածինը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի անգին պարգեւն է մեր ազգին ու Աստծոյ անսպառ օրհնությունների մատուցակը աշխարհասփիւռ հաւատաւոր մեր ժողովրդին:

Սուրբ էջմիածնից ճառագող երկնային լոյսով ու շնորհներով է շողարձակել հաւատքը ազգիս զաւակների սրտերում եւ ամրապնդուել սէրը հայրենիքի հանդէպ: Հայոց սրբօրրանի ներշնչանքով են ստեղծուել հայոց գիրն ու դպրութիւնը, ոգի ու խիզախութիւն առել Աւարայրի քաջերը: Սուրբ էջմիածնով են ոգեշնչուել Սարգարապատի հերոսները, եւ նրա օրհնաբեր կամարների ներքոյ են մխիթարութիւն ու հանգստութիւն գտել փորձությունների ու նեղությունների ենթարկուած, այլեւ Յեղասպանութիւնը վերապրած մեր ժողովրդի զաւակները:

Այս նուիրական սրբավայրում է նաեւ մշտավառ պահուել տեսլականը մեր անկախ պետականութեան վերակերտման, որը եւ իրականութիւն է դարձել մեր ժողովրդի միահամուռ կամարտայայտութեամբ ու աննկուն պայքարով:

Տէրունահաստատ Սուրբ էջմիածինը՝ Լուսաւորչակերտ Մայր Տաճարով, հաւաստիքն է Աստծոյ հետ մեր յաւիտենական ուխտի, դարաւոր վկան առ Աստուած ու հայրենին նուիրումով ապրելու մեր համընդհանուր վճռականութեան, պայծառ փարոսը ազգային-եկեղեցական մեր անդաստանի: Արդար ու ճշմարիտ է՝ Սուրբ էջմիածինը հո-

գեփրկչական ու ազգապահպան իր ծառայութեամբ դարձել է հիմնասիւնը եւ անառիկ միջնաբերդը հայոց ինքնութեան ու լինելութեան, խորհրդանիշը մեր ազգի միասնակա-նութեան եւ Արարատ սուրբ լեռան պէս մեր յարատեւութեան:

Սուրբ Էջմիածինը Աստուծոյ մշտնջենական ներկայութիւնն է մեր կեանքում, անե-րեր ու անյաղթելի: Պատմութեան հոլովոյթներում Հայոց Եկեղեցին՝ Սուրբ Էջմիածին հո-գեւոր կեդրոնով, բազմիցս ենթարկուել է յարձակումների եւ հալածանքների, սակայն հաւատի անպարտելիութեամբ յաղթահարել է դժուարութիւններն ու մարտահրաւէր-ները:

Պատմական անբեկանելի ճշմարտութիւն է՝ մարտնչել Սուրբ Էջմիածնի դէմ նշա-նակում է մարտնչել հայոց ինքնութեան եւ գոյութեան դէմ, հարուած հասցնել հայոց պե-տականութեանը եւ հայ կեանքը պարպել ազգային ու հոգեւոր բովանդակութիւնից:

Սուրբ Էջմիածնի առաքելութիւնը արժէգրկելու որեւէ քայլ՝ նշանակում է փորձել տկարացնել մեր ազգին, խարխլել հիմերը անկախ ու ինքնիշխան կեանքի, որի ջատա-գովն ու պաշտպանն է Հայոց Եկեղեցին: Սուրբ Էջմիածնի հանդէպ աշխարհասփիւռ հա-յութեան որդիական ջերմ սիրով ու նախանձախնդրութեամբ է ամուր մեր հայրենիքը, զօրեղ եւ անկոտորում՝ միաբանութիւնը մեր ժողովրդի: Քրիստոսի կողմից հիմնադրու-ած ոսկեխարիսխ այս սրբավայրը մշտապէս լինելու է ազգային ու հոգեւոր կեանքի առանցքը, քանզի Արարատահայեաց Սուրբ Էջմիածինը Աստուածադրոշմ է, Սուրբ եւ անկորնչելի:

Սիրելիներ, Հայոց Հայրապետները ազգիս հաւատացեալ զաւակների ամբողջա-նուէր հոգածութեամբ բոլոր ժամանակներում պահպանել, նորոգել ու վերակառուցել են Մայր Տաճարը, որպէսզի այն դարեդար առաջնորդի համայն հայութեանը փրկութեան ճանապարհով, յարատեւ մնայ անխախտ վէմը մեր մշտավառ հաւատքի եւ հոյակերտ վկան Քրիստոնեայ Հայաստանի: Վերածնունդ այս սրբավայրը մեր հաւատքին նոր ամ-րութիւն է հաղորդելու, բազուկներին՝ զօրութիւն, մտքերին՝ պայծառութիւն եւ սրտե-րին՝ լաւատեսութիւն, որով պիտի դիմագրաւենք նորօրեայ փորձութիւններն ու աղէ-տաբեր վտանգները:

Հոգենորոգ այս պահին Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում համայն մեր ժողովրդի զաւակներին, որ այսօր մեծագոյն ուրախութիւն եւ հոգեւոր մխիթարութիւն են ապրում Աստուծոյ Տաճարի վերածնունդն ու վերաբացման առիթով:

Հայրապետական Մեր պատգամն է ձեզ, հաւատաւոր ժողովուրդ հայոց, մեր բարե-պաշտ նախնեաց նմանութեամբ հայրենեաց եւ Սուրբ Էջմիածնի սիրով պաշտպանենք մեր երկիրն ու մեր սրբութիւնները: Յոյսով ու լաւատեսութեամբ լծուենք մեր կեանքի վերելքին ու առաջընթացին՝ այն խարսխելով արդարութեան, ճշմարտութեան, ազնուու-թեան վրայ:

Ամէնուր մեզանում զօրացնենք ազգանուիրումի, եղբայրսիրութեան ու համերաշ-խութեան ոգին: Մերժենք մեզանից անտարբերութիւնը, անհանդուրժողութիւնն ու քի-նախնդրութիւնը: Զերծ պահենք մեր պատմութիւնը կեղծիքներից ու խեղումներից:

Համախումբ հոգ տանենք մեր հայրենիքին՝ գիտակցութեամբ, որ հայրենի ինք-նիշխան մեր երկիրն է երաշխաւորը մեր ինքնութեան պահպանման եւ ազգային իղձե-րի ու երազների իրականացման: Կրթենք մեր զաւակներին ազգային նկարագրով, մեր լուսամիտ հայրերի հաւատքով ու քաջարի ոգով, որ մեր ապագան լինի բարօր ու յաղ-

թական: Արդ, ապրենք ու գործենք հոգեւոր արթնութեամբ, մեր պետութիւնը, մեր ազգային կեանքը զօրացնելու վեհ ու պայծառ տեսլականով:

Գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքն ենք բերում մեր Եկեղեցու մեծանուն բարերարներին, որոնց ազնիւ ընծայաբերումներով հնարաւոր եղաւ իրականացնել Տաճարի ամբողջական վերանորոգման աշխատանքները: Մեր օրհնութիւնն ու գնահատանքը՝ հաւատաւոր Մեր զաւակներին, որ տարիներ շարունակ իրենց լուծման են ներդրել այս կարեւոր գործում եւ համբերութեամբ սպասել այս բաղձալի օրուան: Ձեր վարձքը մարգարէի ազդարարած պարգէն է՝ ըստ Աստուծոյ խոստման. «Խաղաղութիւն պիտի տամ այս տեղին, հոգու խաղաղութիւն՝ որպէս փրկութիւն բոլոր նրանց, ովքեր կ'աշխատեն վերականգնել այդ տաճարը» (Անգէ 2.10):

Հայրական ջերմ զգացումներով Մեր գնահատանքն ենք բերում Մայր Տաճարի նորոգութիւնը իրականացրած վաստակաշատ, բազմահմուտ շինարարին, ճարտարապետներին, նկարիչ վերականգնողներին եւ ներգրաւուած միւս մասնագէտներին, ովքեր բարեխղճօրէն կատարեցին իրենց աշխատանքը:

Վերածեալ այս Տաճարից, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի եւ Սուրբ Տրդատ արքայի բարեխօսութեան հայցով, Մեր անդրանիկ աղօթքն ենք առ Աստուած բարձրացնում հայրենի մեր երկրի, աշխարհի խաղաղութեան համար, խնդրում Աստուծոյ ողորմութիւնն ու զօրակցութիւնը հարազատ բնօրրանից բռնի տեղահանուած արցախահայութեանը, անյայտ կորած եւ տակաւին գերութեան մէջ գտնուող մեր զաւակներին: Հայցում ենք, որ հաւատքով ու յոյսով զօրացեալ եւ սիրով միասնական ազգս հայոց աստուածահաճոյ իրագործումներով շէնացնի ու պայծառացնի ազգային-եկեղեցական մեր կեանքը, եւ թող Միածնի Իջման Սուրբ Սեղանից շողարձակող օրհնութիւններն ու շնորհները սփռուեն համայն մեր ժողովրդի կեանքին այժմ եւ յաւիտեանս, ամէն:

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ ԲԱՇԽՈՒՄ Ի ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

Երկուշաբթի, 30 Սեպտեմբեր, 2024-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Մայրապոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանին մէջ տեղի ունեցաւ նորօրհնեալ Սրբալոյս Միւռոնի բաշխում:

Յերեկոյթը բացուեցաւ Տէրունական աղօթքով, ապա ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Մայր Աթոռի դիւանապետ՝ Գերաշնորհ Տ. Արշակ Արքեպիսկոպոս Խաչատրեան: Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Միւռոնով լի անօթները յանձնեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակ՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սարգսեանի, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատուիրակ՝ Գերաշնորհ Տ. Թէոփորոս Եպիսկոպոս Զաքարեանի, Կ. Պոլսոյ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Մաշալեանի եւ թեմակալ առաջնորդներուն:

Սրբալոյս Միւռոնի բաշխման արարողութիւնն իր լրումին հասաւ Հայոց Հայրապետի օրհնութեամբ եւ պատգամով: Նորին Սրբութիւնը նախ գոհութիւն յայտնեց Բարձրեալին Միւռոնօրհնութեան եւ Մայր Տաճարի վերածման պանծալի առիթներով, ապա ըսաւ. «Այսօր քաջալեր հոգիով ձեզի կը փոխանցենք նորօրհնեալ Սուրբ Միւռոնը, որպէսզի այն երկնային իր շնորհներով բաշխուի համայն հաւատաւոր մեր ժողովուրդին:

Մեր յոյսն ու հաւատքը պիտի ջանանք առաւել զօրացնել, վառ պահել ու ամուր պահպանել առկայ փորձութիւններու մէջ, որպէսզի մեր կեանքէն ներս առատացնենք Աստուծոյ օրհնութիւնները: Ինչպէս կ'ըսէ Մատթէոս Ուռհայեցի պատմիչ, մեր հաւատը, որ հիմնուած է աղամանդեայ հիմերու վրայ Սուրբ Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալներու եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի, կայ ու կը մնայ յաւիտեանս անսասան: Սուրբ առաքեալներու եւ առաքելապատիւ հայրապետին աւանդած հաւատը եւ մեր նախնեաց ժառանգութիւնն ու սրբազան արժէքներու նկատմամբ հաւատարմութիւնը պիտի շարունակեն ըլլալ անսասան յենասիւնները մեր աստուածահաճոյ, ազգանուէր միւռոնադրոշմ կեանքի՝ նախանձախնդրութեամբ փոխանցուելով սերունդէ սերունդ: Կը հաւատանք, թէ Տիրոջ պատգամներու իրագործումով մեր ժողովուրդը պիտի գտնէ իր վերելքի ուղիները՝ ամոքելով եւ ընթանալով դէպի խաղաղ ու ապահով հանգրուաններ»:

Իր խօսքի վերջաւորութեան Նորին Սրբութիւնն իր գնահատանքը բերեց ներկաներուն հայրենիքի եւ ժողովուրդի առջեւ ծառացած խնդիրներու լուծմանն ի նպաստ իրենց կարելին գործադրելու համար՝ հայցելով Երկնաւոր Տիրոջ օրհնութիւնը, որպէսզի արդիւնաւորուին անոնց ջանքերը՝ ի սէր հայրենիքի ապահովութեան ու խաղաղութեան, Հայոց բանաւոր հօտի հոգեւոր արթնութեան ու բարօրութեան եւ Եկեղեցւոյ պայծառութեան:

ՀԱՄԵՐԳ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԱՀՈ-ՉԱԿ ՇԱՆՍՈՆԻԷ՝ ՇԱՐԼ ԱՋՆԱԻՈՒՐԻ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

Հինգշաբթի, 31 Հոկտեմբեր, 2024-ին, ժամը 19:30-ին, կազմակերպութեամբ Պետահ Տիկվայի քաղաքապետարանի, միգրացիայի եւ զարգացման բաժնի, «Նոյան Տապան» կրթամշակութային հայկական կեդրոնի, եւ աշակցութեամբ Իսրայէլի մէջ Ֆրանսական ինստիտուտի եւ Ֆրանսայի դեսպանատան մշակութային բաժնի՝ Պետահ Տիկվայի «Համեսիլոտ» թատրոնի համերգասրահին մէջ տեղի ունեցաւ աշխարհահռչակ շանսոնիչէ՝ Շառլ Ազնաւուրի ծննդեան 100-ամեակին նուիրուած «LA BOHEME» խորագիրը կրող համերգ:

Համերգին Սրբոց Յակոբեանց Միաբանութենէն ներկայ գտնուեցան Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան, Տ. Կորին Եպիսկոպոս Բաղդասարեան, Տ. Դեւոնդ Ծ. Վարդապետ Յովհաննիսեան, Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեան, Տ. Սիոն Աբեղայ Թաքուշեան եւ Սարգիս Սարկաւագ Գինոսեան:

Պատրիարքութեանս կողմէ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Դիւանապետի առժամեայ պաշտօնակատար՝ Տ. Սիոն Աբեղայ Թաքուշեան:

ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆՍ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉՆ ԱՅՅԵԼԵՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՊՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Զորեքշաբթի, 20 Նոյեմբեր, 2024-ին, առաւօտեան ժամը 10-ին, Պատրիարքութեանս Կիւլպէնկեան Մատենադարանի տեսուչ եւ «Սիոն» ամսագրի գլխաւոր խմբագիր՝ Հոգեշնորհ Տ. Ներսէս Վարդապետ Ալոյեան այցելեց Հայաստանի ազգային գրադարան եւ հանդիպում ունեցաւ տնօրէնուհի՝ Տիկին Աննա Զուլեանի հետ: Հանդիպմանը ներկայ էր նաեւ Ազգային գրադարանի գիտական աշխատանքներու գծով տնօրէնի տեղակալ՝

Տիկին Հայկանոյշ Ղազարեան:

Հայր Ներսէ՛հ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ Հայաստանի ազգային գրադարանի նուիրեց Ազգային գրադարանի հաւաքածոյէն բացակայող՝ Երուսաղէմի մէջ տասնեակ տարիներ առաջ տպուած հատորներ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Կիւլպէնկեան Մատենադարանի մէջ պահուող հնատիպ գիրքերու, պարբերաթերթերու բացառիկ հաւաքածոներու թուայնացման աշխատանքները կազմակերպելու վերաբերեալ հարցեր:

Հանդիպումէն յետոյ Հայր Ներսէ՛հ այցելեց նաեւ Գրատպութեան թանգարան, ուր թանգարանի տնօրէնուհի՝ Տիկին Բալասան Յարութիւնեան ներկայացուց ցուցադրուած բացառիկ հաւաքածոն, որու «Հայ գրատպութեան Սփիւռքը» կոչուող սրահին մէջ իր պատուաւոր տեղը կը զբաղեցնէ 1866 թուականէն հրատարակուող Պատրիարքութեան «Սիոն» ամսագիրը: Այցի վերջաւորութեան Հայր Ներսէ՛հ իր տպաւորութիւններն արձանագրեց այցելուներու տպաւորութիւններու տեսրակին մէջ:

«ՇՆՈՐՀԻ ԼՈՅՍԸ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՍ ՀԵԼԷՆ ԵՒ ԷՏՈՒԱՐՏ ՄԱՐՏԻԿԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ուրբաթ, 22 Նոյեմբեր, 2024-ին, Երուսաղէմի Հայ եւ Լատին Պատրիարքութեանց գործակցութեամբ Պատրիարքութեանս Հելէն եւ Էտուարտ Մարտիկեան թանգարանին մէջ բացուեցաւ սպանացի արուեստագէտ Մարիա Ռուիզ Ռոտրիկէզի «Շնորհի լոյսը» խորագիրով մանրանկարներու առժամեայ ցուցահանդէսը: Յուցադրուած մանրանկարները Լատին Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Փիերպաթիսթա Արքեպիսկոպոս Փիցապալայի պատուէրով գրուած ձեռագրի նկարազարդումներն են, որոնք սպանացի նկարչուհին գծած է հայկական միջնադարեան մանրանկարներէն՝ մասնաւորապէս Թորոս Ռոսլինէն, Սարգիս Պիծակէն, Տուխ Թուրէն եւ բազում այլ ծաղկողներէն ներշնչուելով:

«Շնորհի լոյսը» առժամեայ ցուցահանդէսը բացուեցաւ ի ներկայութեան Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեանի, Երուսաղէմի Լատինաց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Փիերպաթիսթա Արքեպիսկոպոս Փիցապալայի, Երուսաղէմի մէջ Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոս՝ Տիար Նիկոլաս Գասիանիդէսի, Սրբոց Յակոբեանց Միաբան Հայրերու, Սաղիմահայերու եւ հիւրերու:

Յուցահանդէսի բացման առթիւ կազմակերպուած էր երաժշտական կոկիկ յայտագիր: Բացման խօսքով հանդէս եկաւ եւ ներկաներուն բարի գալուստ մաղթեց ցուցահանդէսի համակարգող, Հելէն եւ Էտուարտ Մարտիկեան թանգարանի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան, իսկ մանրանկար ցուցանմոյշներու բովանդակութիւնը ներկայացուց մանրանկարներու հեղինակ՝ Մարիա Ռուիզ Ռոտրիկէզ: Երեկոյի ընթացքին հնչեցին Կոմիտասի, Հենտելի եւ Պախի ստեղծագործութիւնները՝ Ալտո Տորին Սասինիի, Թաւշուծակահար Ֆապիէն Վան Էքի եւ դաշնակահար Գէորգ Բադալեանի կատարմամբ:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՓԻԼԻՊՊՈՍԻ ԱՂԲԻՐ-ՍՐԲԱՎԱՅՐ

Շաբաթ, 30 նոյեմբեր, 2024-ին, առաւօտեան ժամը 9:30-ին, Սուրբ Անդրէի եւ Սուրբ Փիլիպպոսի տօնին առիթով հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանի կատարուեցաւ ամենամեայ ուխտագնացութիւն դէպի Հայոց Փիլիպպոսի աղբիւր-սրբավայր: Ուխտագնացութեան ներկայ էին Սուրբ Ուխտի Միաբան հայրեր, Ժառանգաւորացի եւ Ընծայարանի ուսանողներ, ուսուցիչներ եւ Սաղիմահայեր: Աղբիւր-սրբավայրին առջեւ տեղի ունեցաւ մասնաւոր արարողութիւն, եւ ապա մատաղ օրհնուեցաւ եւ բաժնուեցաւ ներկաներուն:

Ս. Փիլիպպոսի աղբիւրին մասին յիշատակութիւնը կը գտնուի Գործք Առաքելոց գրքին մէջ (Գործք. 8:26-40):

Տեղեկութիւններ կան նաեւ Տիգրան Սաւալանեանցի «Պատմութիւն Երուսաղէմի» հատորին մէջ, ուր կ'ըսէ թէ 1099-ին խաչակիրներ Երուսաղէմը պաշարելու ատեն, տապէն փրկուելու համար ջուր կը բերէին 12 քիլոմէթր հեռաւորութեան վրայ գտնուող Փիլիպպոսի աղբիւրէն: Իսկ 1857-ին Յովհաննէս Զմիւռնացի Պատրիարք կը գննէ աղբիւրին հողակտորը: Իր կեանքի մայրամուտին Յովհաննէս Պատրիարք յաճախ կու գար աղբիւրի շրջափակին մէջ հանգստանալու, մանաւանդ իր շնչառական հիւանդութեան օրերուն:

Աղբիւրի տարածքը եւ շրջակայ այգիները կը պատկանին Հայոց Պատրիարքութեան եւ կը կազմեն 32.000 քառակուսի մէթր: Տարածքը կը գտնուի Երուսաղէմէն Քերրոն եւ Կազա տանող ճանապարհներու վրայ: Հոն գտնուող եկեղեցիէն ցաւօք միայն խոնարուած պատեր մնացած են:

ՇՆՈՐՀԱՆԴԷՍ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ԵՒ ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԽԻՒԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԱՏԵԱՆԻ, ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ» Ա. ՀԱՏՈՐԻ

Չորեքշաբթի, 4 Դեկտեմբեր, 2024-ին, երեկոյեան ժամը 7-ին, Ժառանգաւորաց վարժարանի փոքր սրահին մէջ տեղի ունեցաւ Լուսինէ Սահակեանի, Անի Սարգսեանի եւ Անի Ոսկանեանի աշխատասիրած՝ «Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանութեան արխիւի տեղեկագիր մատեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան» գրքի առաջին հատորի շնորհանդէսը:

Երեկոյի բացման խօսքը կատարեց Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան: Սրբազան Հայրը նախ անդրադարձաւ Կ. Պոլսոյ Պատրիարք՝ Զաւէն Արքեպիսկոպոս Տէր Եղեայեանի հաւաքագրած Հայոց ցեղասպանութեան արխիւի կարեւորութեան, որը երջանկալիշատակ Պատրիարքը որպէս ապահով վայր փոխադրած էր Երուսաղէմ: Յետագային, 1947 թուականին նաեւ ինք իր կտակին համաձայն թաղուած է Երուսաղէմի Սուրբ Փրկիչ գերեզմանատան մէջ՝ Պատրիարքներու կարգին: Ապա ներկայացուց գրքի հեղինակներէն Լուսինէ Սահակեանը, Անի Սարգսեանը եւ Անի Ոսկանեանը, որոնց կատարած աշխատանքի արդիւնքը որակեց որպէս կոթողային գործ, շնորհաւորեց հեղինակներէն ներկայ Տիկին Լուսինէ Սահակեանը, տեսակապով շնորհանդէսին միացած Տիկին Անի Սարգսեանը եւ Տիկին Անի Ոսկանեանը: Շնորհակալութիւն յայտնեց հատորի ստեղծմանն աջակցած բոլոր անձերուն եւ հրաւիրեց Տիկին Լուսինէ Սահակեանը՝

ներկայացնելու գիրքը շնորհանգէսին ներկայ հոգեւորականներուն, ժառանգաւոր սաներուն եւ Սաղիմահայերուն:

Տիկին Լուսինէ Սահակեան նախ շնորհակալութիւն յայտնեց գրքի ստեղծման աշխատանքներուն աջակցող եւ քաջալերող Սրբոց Յակոբեանց Միաբաններէն Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանին, Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանին, Հոգեշնորհ Տ. Ներսէս Վարդապետ Ալոյեանին եւ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանին եւ Պատրիարքարանի պաշտօնեայ՝ Բարեշնորհ Պօղոս Սարկաւազ Շահանեանին: Մասնաւոր երախտագիտութեան խօսք ըսաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօրը իր հայրական վերաբերմունքի եւ օրհնութեան համար: Կարեւորեց նաեւ Երեւանի Պետական Համալսարանի նախկին ռեկտոր՝ հանգուցեալ Արամ Սիմոնեանի, ներկայիս ռեկտոր՝ Յովհաննէս Յովհաննիսեանի դերը գրքի ստեղծման աշխատանքներու մէջ: Շնորհակալական խօսքեր ըսաւ նաեւ գրքի խմբագրական կազմին՝ Տիարք Վահրամ Շեմմասեանին, Վաչէ Բրուտեանին, Ռուբէն Մելքոնեանին, Միհրան Մինասեանին, Ալեքսանտր Սաֆարեանին, Սերգէյ Վարդանեանին, Վարուժան Պօղոսեանին եւ Տիկին Սեդա Գասպարեանին, գրքի հրատարակման հովանաւոր՝ բարերար եւ գործարար Տիար Հայկ Զէպէլեանին եւ նիւթապէս աջակցող միւս բարերարներուն: Ապա ներկայացուց գիրքը ներկաներուն:

Բազմալեզու այս արխիւը բաղկացած է հայերէն, օսմաներէն, ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն, ռուսերէն, հայատառ թուրքերէն վաւերագրերէ եւ իր ծաւալով ու տարաբնոյթ վաւերագրերու ընդգրկումով անգնահատելի արժէք ունի 1912-1922 թթ. հայ ժողովուրդի համար ճակատագրական պատմաքաղաքական իրադարձութիւններու, օսմանեան եւ քէմալական իշխանութիւններու իրագործած ցեղասպանութեան դեռեւս շրջանառութենէ դուրս մնացած մանրամասները վեր հանելու տեսանկիւնէն: Արխիւը ստեղծուած է 1919-1922 թուականներուն Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան հովանիի ներքոյ հիմնուած Տեղեկատու դիւանի կողմէ: Դիւանը իր գործունէութիւնը ծաւալած է պատմական եւ աշխարհաքաղաքական առճակատումներու բարդ ժամանակաշրջանին, որու կործանարար կիզակէտին մէջ յայտնուած էր հայ ժողովուրդը: Այդպիսի վըտանգաւոր պայմաններու տակ նման հսկայածաւալ վաւերագրերու հաւաքման աշխատանքը մեծ անձնուիրութիւն եւ յատկապէս խիզախութիւն կը պահանջէր: Տեղեկատու դիւանը եւս հայ ժողովուրդի նման անցած է տարագրամն ուղիներով՝ տեղէ տեղ փոխադրուելով, անցնելով դեգերումներու միջով, նոյնիսկ մասնատուելով, տարբեր ճանապարհներով վերջապէս հանգրուանած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի եւ այսօր ամբողջ հաւաքածոն կը պահուի Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հովանիի ներքոյ:

2017 թուականէն ի վեր չորս այցելութիւններու ընթացքին շուրջ երեք ամսուայ ընթացքին Տիկին Լուսինէ Սահակեան եւ Տիկին Անի Սարգսեան կարողացած են թուանացնել 11 տուփերու մէջ պահուող արխիւային վաւերագրերը: Զաւէն Պատրիարքի գրութիւններէն տեղեկանալով որ այդ արխիւը բաւական մեծ ծաւալ ունի, անոնք այլ ֆոնդերէն գտած են լրացուցիչ երեք արկղ եւս եւ ամբողջացուցած են սոյն արխիւը:

Թուայնացման աշխատանքները աւարտելէ ետք աշխատակազմին միացած է նաեւ Տիկին Անի Ոսկանեան:

Քանի որ գիրքը նուիրուած է «ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան սրբադասուած նահատակներու, ի խորին երախտագիտութիւն Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք, երջան-

կայիշատակ Տէր Զաւէն Արք. Տէր Եղիայեանի եւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի «Տեղեկատու Դիւանի»՝ «Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանութեան արխիւը» ստեղծողներուն» Տիկին Լուսինէ Խնդրեց ներկաներէն մէկ վայրկեան լռութեամբ յարգել անոնց յիշատակը: Ապա շարունակեց ներկայացնել գիրքը:

Գիրքին մէջ իւրաքանչիւր վաւերագիր արձանագրուած է ըստ թղթապանակներու: Մատենին մէջ առաջին անգամ մանրամասն ցուցակագրուած եւ ծաւալուն նկարագրութեամբ ներկայացուած են Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին մէջ պահուող Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի հովանիի ներքոյ ստեղծուած «Տեղեկատու դիւանի» «Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանութեան արխիւի» առաջին տուփին մէջ հաւաքուած 634 վաւերագրեր, որոնցմէ հայերէն՝ 354, ֆրանսերէն՝ 185, օսմաներէն՝ 34, անգլերէն՝ 44, ռուսերէն՝ 4, գերմաներէն՝ 1, բոլորը միասին նկարագրուած են շուրջ 2039 էջ համապատասխան ծանօթագրութիւններով: Գիրքը բաղկացած է 1040 էջերէ: Այս արխիւն ունի աղբիւրագիտական եզակի արժէք 1912-1922 թթ. Հայկական հարցի զարգացման հանգրուաններու եւ Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան համար: Արխիւին մէջ հաւաքուած են հայ եւ օտար քաղաքական-հասարակական, հոգեւոր գործիչներու, դիւանագէտներու բազմաթիւ զեկոյցներ, տեղեկագրեր, նամակներ, ականատեսներու վկայութիւններ եւ օրագրեր, ինչպէս նաեւ՝ Առաջին աշխարհամարտէն առաջ եւ յետոյ Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ եւ Օսմանեան կայսրութեան հայաբնակ այլ վայրերու հայ բնակչութեան, որբերու, իսլամացուած ու առեւանգուած հայերու, նիւթական կորուստներու վիճակագրական ցանկեր, առաջնորդարաններէն՝ Կ. Պոլսոյ Պատրիարքարան ուղարկուած նամակներ, օսմանեան իշխանութիւններու՝ հայերու բնաջնջման հրամանագրեր, երիտթուրք ռճրագործներու անուանացանկեր եւ այլն: «Տեղեկատու դիւանի» սոյն արխիւը ստեղծուած է որպէս հայց՝ Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչ-պատասխանատուներուն ու մասնակից յանցագործներուն օրինական պատժելու եւ արդարութիւնը վերականգնելու համար: Մատենը կարեւոր փաստական մանրամասներ կը մատուցէ պատմաբաններուն, ցեղասպանագէտներուն, արեւելագէտներուն, դիւանագէտներուն, ուսանողներուն, ինչպէս նաեւ՝ նոր ցեղասպանութիւններու կանխարգելմանն ուղղուած քաղաքական ու հասարակական հայ եւ միջազգային կազմակերպութիւններու նախաձեռնութիւններուն:

Շնորհանդէսին տեսակապով միացաւ նաեւ գրքի հեղինակներէն Տիկին Անի Սարգսեան: Ան յուզմունքով ողջունեց եւ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն: Իր խօսքին մէջ Տիկին Անի Սարգսեան Տիկին Լուսինէ Սարգսեանի եւ Կորիւն Սրբազանի խօսքին յաւելեց, որ այս գիրքը կ'ամփոփէ հայերէն, օսմաներէն եւ եւրոպական գրեթէ բոլոր լեզուներով զեկոյցները, արձանագրութիւնները, օրագրերը, եւ ըսաւ. «Կը հաւատամ, որ ծանօթագրութիւններով հարուստ այս գիրքը, ինչպէս նաեւ օսմաներէն փաստաթուղթերու թարգմանութիւնները ուղենիշ կը դառնան հետազոտողներու համար, եւ նոր շունչ կը հաղորդեն ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեանը, ինչպէս նաեւ ցեղասպանութեան մեր այս արխիւի ուսումնասիրութեանը: Իմ խորին երախտագիտութիւնը կը յայտնեմ բոլոր անոնց, որոնք աջակցեցին մեզի այս երկարատեւ, բայց եւ նուիրական գործին: Չեմ կրնար մոռանալ ուսումնասիրութեան ընթացքին իմ եւ Լուսինէ Սահակեանի ունեցած յուզումնառատ, արտասուալից օրերն ու ըրոպէները, երբ կը հանդիպէինք ցեղասպանութեան ահասարսուռ տեսարաններու նկարագրութեանց: Յուսալքութեան, ուժասպառ ըլլալու եզրին մեզի մշտապէս կ'ոգեւորէին, կը մխիթարէին մեր հոգեւոր հայրերը, որպէսզի կարողանանք շարունակել այս դժուարին աշխատանքը»:

տանքը»:

Ապա դարձեալ տեսակապով շնորհանդէսին միացաւ նաեւ Տիկին Անի Ոսկանեան, որ դարձեալ անթաքոյց յուզմունքով ներկայացուց մատենի բացառիկութիւնը, որու մէջ ամփոփուած փաստաթուղթերը կ'ամրագրեն ցեղասպանութեան իրողութիւնը: Տիկին Անի Ոսկանեան իր խօսքին մէջ յուզմունքով յիշեց իր եւ գործընկերներու առօրեան. «Մեր աշխատանքային առօրեան կը սկսէր ինչ-որ պահի եւ կ'աւարտէր այն ատեն, երբ այլեւս չէինք կրնար աշխատիլ, կամ մեր կատարած տուեալ օրուայ աշխատանքէն գոհ կ'ըլլայինք: Մենք չունէինք գիշեր, չունէինք ցերէկ, չունէինք Շաբաթ եւ Կիրակի: Աշխատանքի ողջ ընթացքին կար մեծ պատասխանատուութիւն եւ այսօր ուրախութեամբ եւ մեծ յուզմունքով տեսայ այդ աշխատանքի արդիւնքը դրուած Զաւէն Պատրիարքի շիրմաքարին»:

Շնորհանդէսի վերջաւորութեան Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան շնորհակալութիւն յայտնեց գրքի հեղինակներուն, որոնց մասնագիտական աշխատանքի շնորհիւ այս կոթողային աշխատանքը դրուեցաւ ուսումնասիրողներու եւ հետազօտողներու սեղանին: Իր խօսքին մէջ Սրբազանը վստահութիւն յայտնեց, որ «գիրքը շատ պատասխաններ պիտի տայ, բացայայտումներ պիտի ընէ ի հեճուկս թրքական մերժողականութեան, նաեւ ի հեճուկս որոշ հայերու թրքաբարոյ մեկնաբանութեանց: Երախտապարտ ենք: Թող Աստուած օրհնէ հեղինակներուն, որպէսզի նոյն եռանդով շարունակեն յաջորդ հատորներու հրատարակման դժուարին գործը»:

Շնորհանդէսը փակուեցաւ աղօթքով:

ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՋ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ 13-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Հինգշաբթի, 12 Դեկտեմբեր, 2024-ին, առաւօտեան ժամը 11-ին, կազմակերպութեամբ Իսրայէլի Ներքին գործոց նախարարութեան եւ Կրօնից նախարարութեան՝ Երուսաղէմի Ռամադա պանդոկին մէջ տեղի ունեցաւ Իսրայէլի մէջ կրօնական առաջնորդներու խորհուրդի 13-րդ համաժողովը:

Համաժողովի այս տարուան խորագիրն էր «Արժէքները եւ ընկերակցութիւնը պատերազմի ժամանակ»:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ